



18 (173). ՇԱՏ-ՈՒՏԱՆ

Ժամանակով մարդ մե շատ ուտան էր, օրական քառսուն մարդու կեր կուտեր, հմալ բողզով մարդ էլ ո՞ն կոներ պահեր, մինակ թաղավոր, էն լե շիվարեր ու ղվզեր էր:

Շատ-ուտանի անուն զնաց հասավ ուրիշ թագավորի մե: էգ թագավոր մարդ ճամպեց շատ-ուտանի թագավորին:

— Խնդիրք կէնիմ,— ըսեց,— զմարդ ճամպիս իմ մոտ, տեսնամ՝ ի՞մալ օրական քառսուն մարդու կեր կուտե:

Շատ-ուտան կ'ըթա: Շատ կէրթա, քիչ կէրթա՝ գել օխշար մե կերեր է, կտոր մե աղիք մանցեր է, կառնե զէդ աղիք, մեջ ավաղ կը լցե ու փետով կը սխմե, քանի կը սխմե՝ աղիք կուտի ու կը հասարնա:

— Հր՛մ,— կըսե,— հմալե մարդու աղքըներ լե է՞դ օրինակ, քանի լցիս, քանի շատ ուտիս, կը լեննա ու կուտի: Ուխտ էղնի յառջև աստրծուն՝ չըսօրվե յետ մեկ մարդու կերածեն յեվելի շուտիմ:

Կէրթա զինք կանչող թագավորի մոտ: Հաց ուտելու ժամանալ քառսուն մարդու հաց ու կերակուլ կը շարին վըր սեղնին, շատ ուտան կը մոտենա, մեկ մարդու կեր կուտե, կքաշվի մեկ կողմ: Թագավորն ու մարդիկ կը զարմանան, կըսին.

— Մա՛րդ, մենք ի՞նչ ենք լսի, ի՞նչ կը տեսնանք մկա:

Շատ-ուտան կըսե.

— Ինչ օր լսեր իք, ինչ օր ըսած ին՝ օղո՛րդ է: Մկա կոնամ ղիղա սեղան սրբիմ, կանիմ մեկ կողմ:

Ու կէնն գաղիքի մասաւնն, կըսե.

— Յրմեն բան սովորութեն է: Շատ ուտել լն սովորութք է,  
բիշ ուտել լն սովորութք է, էդ բան մարդու կամբից է կախված:

էդ օրվրնն, կըսին, շատ-ուտանն կը դառնա բիշ-ուտան, ու  
թաղալոր լն նա՛ կը շիվարի, նա՛ կը զվդի էդ մարդուց:

